ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 14-ին Ազգային Ինքնորոշում Միավորման Աշխատանքի համակարգիչ կենտրոնը կոչ-թռուցիկով դիմեց հայ ժողովրդին դուրս գալ հանրաժողովի: Հայտնվում էր, որ նոյեմբերի 15-ին Եվրոխորհրդարանը քննարկելու է Հայկական հարցը և այնտեղ որպես վկա հանդես է գալու ազգային գործիչ Պարույր Հայրիկյանը՝ ներկայացնելով Հայկական հարցի այսօրվա վիճակն ու առաջադրելով մեր ժողովրդի խնդիրներն ու պահանջները:

Խորհրդային Հայաստանում գործող ազգային ազատ միությունների, միավորումների ու խմբերի նախապես կայացրած համաձայնությամբ ձևակերպվել էին հետևյալ փաստաթղթերը, որոնք ԱԻՄ-ի անդամների կողմից նոյեմբերի 15-ին ներկայացվեցին հանրաժողովի մասնակիցների ուշադրու-

---

Ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի, 1988 թվական, էջ 14

թյանը:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ. ԵՎՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆ
Պատճեն՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱ-
ՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱ-
ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հիմնվելով միջազգային գործող օրենքներին և ապավինելով Եվրոխորհրդարանի հետևողական արդարադատ դիրքորոշմանն ու հայանպաստ գործունեությանը՝ դիմում ենք Ձեզ հետևյալ խնդրանքով.

Ստանձնել հայ ժողովրդի ինքնորոշման արդարացի պահանջի ու իրավունքի հովանավորությունը, միջազգային հանրության առջև, միջազգային օրինապաշտպան կազմակերպություններում այն ներկայացնելու, պաշտպանելու և խնդրի վերջնական լուծմանը նպաստելու մարդասիրական առաքելությունը:

Որպես մեր դիմումի իրավական հիմք հայտնում ենք, որ.

ԱՌԱՋԻՆ՝ 1988 թվականի սեպտեմբերի 23-ին և 25-ին ավելի քան 500.000-անոց հանրաժողովներում հայ ժողովուրդը իր քվեն տվեց ի օգուտ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՄԱՆ հետևյալ հայտարարությունների.

ա/ Հայաստանի ժողովուրդը դիմում է Եվրոխորհրդարանին ու Միավորված Ազգերի Կազմակերպությանը՝ նրանց հովանավորությամբ ու անմիջական վերահսկողությամբ անցկացնելու հանրաքվե՝ Հայաստանը Արցախի հետ, ԽՍՀՄ կազմից դուրս բերելու համար, որը հայ ազգը կոտորածներից և ստույգ ոչնչացումից փրկելու միակ երաշխիքն է:

բ/ Խնդրում է Եվրոխորհրդարանին և ՄԱԿ-ին ԽՍՀՄ կառավարությունից պահանջել անհապաղ Հայրենիք վերադարձնելու հայ ազգի արժանավոր զավակ Պարույր Հայրիկյանին:

ԵՐԿՐՈՐԴ՝ ,,ԱԶԳԱՅԻՆ ԾԱԿԱՏ,, շարժումը համաշխարհային հասարակայնությանն ու Եվրոխորհրդարանին է դիմում հետևյալ հայտարարությամբ. Հայաստանը բռնակցվելով Խորհրդային Միությանը /հիմա. Ռուսաստանին/ ոչ միայն կորցրեց իր պետականությունն ու խոստացյալ, բայց մինչ այժմ զուտ հորջորջվող սուվերենությունը, այլև անընդմեջ ենթարկվելով ազգային հալածանքի, տարածքային մասնատման, տեղահանության ու բռնությունների՝ այսօր կանգնած է ֆիզիկական ու հոգևոր լիակատար բնաջնջ-

---

ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի, 1988 թվական, էջ 15

ման եզրին:

Դիմում ենք Եվրոխորհրդարանին և միջազգային հասարակայնությանը՝ պահանջել ԽՍՀՄ կառավարությունից իրագործել իր իսկ ստորագրած միջազգային պայմանագրերն ու փաստաթղթերի պարտավորությունները, դադարեցնել հայ ազգի նկատմամբ իրագործվող ֆիզիկական, հոգևոր ու կենսաբանական եղեռնը, հարգել մարդու և ազգի ինքնորոշման իրավունքը, վերականգնել հայրենիքից բռնի վտարված Պարույր Հայրիկյանի քաղաքացիությունը:

ԵՐԲՈՐԴ՝ 1988թ. նոյեմբերի 12-ի հանրաժողովում Հայաստանի ,,ՂԱՐԱԲԱՂ,, կոմիտեն հստակորեն արտահայտեց իր դիրքորոշումը Սումգայիթում կատարված ցեղասպանության կապակցությամբ. նշեց, որ Մոսկվան թաքցնելով կատարվածի ողջ իսկությունը՝ հաստատում է իր ոչ միայն մեղսակցությունը, այլև անմիջական ղեկավար դերը Սումգայիթի, Մասիսի, Ջվարթնոցի և Խոջալուի եղեռնագործության հրահրման ու կազմակերպման գործում:

Կոմիտեն դիմում է միջազգային հասարակայնությանը՝ խնդրելով պաշտպանել կազմակերպված ոճրագործության զոհ հայ ժողովրդի իրավունքները:

ՉՈՐՐՈՐԴ՝ ,,ԳՈՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ,, Ազատ Միավորումը ահազանգում է Հայաստանի կենսաբանական աղետի, ամեն պահ պայթյունավտանգ ատոմակայանի, մեծ ու փոքր քիմիայի ազդեցությամբ հայ ազգի գենոֆոնդի ոչնչացման, նրա պատմամշակութային, հոգևոր արժեքների անխուսափելի կործանման, Սումգայիթում իրականացված ջարդի մասին և այսօրվա իրավիճակը որակավորում է որպես շարունակական եղեռն:

Ելնելով այս իրադրությունից ,,ԳՈՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ,, դիմում է համաշխարհային հասարակայնությանն ու Եվրոխորհրդարանին խնդրելով սատար կանգնել հայ ժողովրդին դուրս գալու առկա ողբերգական իրավիճակից և ելարտադրել Խորհրդային կառավարությանը ճշմարիտ քաղաքական գնահատական տալ իր գործողություններին ու Սումգայիթի եղեռնագործությանը:

,,ԳՈՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ,, Պարույր Հայրիկյանի արտաքսումը հայրենիքից գնահատում է որպես մարդու իրավունքների ոտնահարում և պահանջում նրան վերադարձնել Հայրենիք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ հանձնախմբերը և ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ միջազ-

---

ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի, 1988 թվական, էջ 16

զային հասարակայնությանն են դիմում հետևյալ հայտարարությամբ.

Խնդրում ենք պարտադրել ԽՍՀՄ կառավարությանը հարգել իր իսկ սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքները. չեղյալ հայտարարել Պարույր Հայրիկյանին հայրենիքից արտաքսելու ապօրինի որոշումը, դադարեցնել Ազգային շարժման մասնակիցների հանդեպ ապօրինի բռնություններն ու ծերբակալումները:

Հանձնախմբերի վերոհիշյալ հայտարարությանը միանում են Ուկրաինայի, Վրաստանի և Մերձբալթյան երկրների իրավապաշտպանները:

ՎԵՑԵՐՈՐԴ՝ ,,ԳՈՅԱՊԱՅՔԱՐ,, միությունը փաստարկելով հայ ժողովրդի ներկա ողբերգական վիճակը, հայտարարում է.

Որպեսզի 70 տարի ուշացումով չճանաչվի այսօր իրագործվող եղեռնը, /ինչպես եղավ 1915թ. ցեղասպանության փաստը/ դիմում ենք Եվրոխորհրդարանին և նրա միջոցով համաշխարհային հասարակայնությանը խնդրանքով, որ պահանջեն Մոսկվայից այսօրևեթ դադարեցնել հայ ժողովրդի նկատմամբ ծրագրված ցեղասպանությունը:

ՅՈԹԵՐՈՐԴ՝ ,,ՄԱՇՏՈՑ,, միավորումը դիմում է Եվրոխորհրդարանին և միջազգային հանրությանը կոչով՝ օժանդակել հայ ժողովրդի հոգևոր ու լեզվական եղեռնի դադարեցմանը:

Նույն օրը ի զորակցումն Պարույր Հայրիկյանի, հանրաժողովը միաձայն ընդունեց նաև հետևյալ փաստաթուղթը.

ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ԵՎՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ո Ւ Ղ Ե Ր Զ

Քանի որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդը ձայնազուրկ է միջազգային բոլոր ատյաններում և այդ ձայնի իրավունքը միայն իրեն վերապահ-

---

ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի, 1988 թվական, էջ 17

հող ԽՍՀՄ կառավարության շահերը չեն համապատասխանում մեր ժողովրդի կենսական խնդիրներին, 1988թ. նոյեմբերի 15-ին Երևանում կայացած մոտ 500.000-անոց հանրաժողովի մասնակիցներս հայտարարում ենք.

Պարույր Հայրիկյանին ճանաչում ենք խորհրդային հայության իրավունքներն ու պահանջները ներկայացնող, պաշտպանող, ժողովրդական լիազոր անձ՝ դեսպան: